## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«___» 08 2010թ. N 380-Ն

ք. Երևան

### «ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ, 14-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1807-Ն որոշման պահանջներով.

1. Հաստատել «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը, համաձայն հավելվածի.
2. «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրեն Ա.Վերդյանին՝ սույն հրամանի 1-ին կետով հաստատված «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը սեղմ ժամկետում գրանցել իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

«11» 08 2010թ.

ք. Երևան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի
«13» 08 2010 թ.

թիվ 380-Ա հրամանով

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար՝

Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆ
«  » 2010թ.

Հավելված

ՀՀ տրանսպորտի և կապի
նախարարի հրամանի
Տպագրված է
ընդամենը օրինակ

Օրինակ

Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի Արաբկիրի
տարածքային բաժնի
կողմից 17.01.2006թ.
գրանցման թիվ 264.210.07377
վկայականի թիվ 03Ա070726

Թիվ փոփոխությունը
գրանցված է իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
Արաբկիրի տարածքային
բաժնի կողմից < > 2010թ.

Արաբկիրի Տ/Բ պետ՝

-------------- Հ.ԽՈՒԴԳԱՐՅԱՆ

# «ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

# Փ Ո Փ Ո Խ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Կանոնադրության 36-րդ կետը լրացնել նոր «ի» ենթակետով հետևյալ բովանդակությամբ

«ի) կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի նախագծերը նախապես համաձայնեցնում է պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հետ:

2. Կանոնադրության 31-րդ կետի

1) «բ» ենթակետում «տնօրենին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև համաձայնություն է տալիս կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի նախագծերին»